MESSAGE DE SA SAINTETE KAREKIN II, CATOLIGOS DE TOUS LES ARMENIENS
A
SHAMIRAM SEVAG, A L'OCCASION DE SON CENTIEME ANNIVERSAIRE

ԾՈՅԼԻԿՈՍՅԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ
ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԵՐԵՎԱՆ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆ

SUPREME PATRIARCH
CATHOLICOS
OF ALL ARMENIANS
MOTHER SEE OF HOLY ECHMIADZIN

Թիվ 1098

8 հուլիսի, 2014 թ.

ՄԵԾԱՊԱՏՈՒ
ՏԻԿԻՆ ՇԱՄԻՐԱՄ ՍԵՎԱԿ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Սիրելի Տիկին Չիլինկիրյան,

Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունը, ջերմ շնորհավորանքներն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ ծննդյան նշանակալի 100-ամյա հոբելյանի առիթով:

Դուք աստվածաշնորհ կյանքի երկարամյա ճանապարհ եք անցել, վերապրել Հայոց Ցեղասպանությունը և մեր հանճարավոր ժողովրդի հարության հավատքով ու զորությամբ շարունակել Ձեր ընթացքը եկեղեցանվիրումով, հայրենասիրությամբ ու ազգասիրությամբ: Մեծ Եղեռնի նահատակ Ձեր հոր՝ մեր ժողովրդի տաղանդաշատ զավակ Ռուբեն Սևակի հեթոսական ոգին եք կրել, որով հաղթահարել եք նեղություններ ու դժվարություններ և փրեցյալ ծնողի սրբալույս օրինակով միշտ հավատարիմ մնացել Քրիստոսասուրբ մեր հավատքին, ազգային մեր սրբազան արժեքներին: Ուրախություն էր Հայոց Հայրապետիս համար, որ հայոց հոգևոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Տիար Հովհաննես Չիլինկիրյանի կողմից իր բարձրագույնս գեղագիտական հավաքածուի և Ռուբեն Սևակի արխիվի ազնիվ նվիրատվությամբ բացվեց Ռուբեն Սևակի թանգարանը, որով Սուրբ Էջմիածին այցելող ուխտավորներ հնարավորություն ունեն ծանոթանալու արժանավոր հայորդու հիանալի ստեղծագործություններին:

Այսօր Դուք Ձեր ծննդյան 100-ամյակը դիմավորում եք Ձեր հանդեպ մեր ժողովրդի զավակաց սիրո մեջ, արվեստի, գրականության, նոր սերնդի կրթության առաքելության մեջ ներդրած Ձեր գնահատարժան մեծ վաստակով:

Ի խորոց սրտի վերատին Մեր շնորհավորանքներն ենք բերում Ձեզ և հայցում Բարձրյալն Աստծո հանապազ օրհնությունը: Թող երկնավոր Տերը Ձեզ միշտ պահի ու պահպանի Իր ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո՝ շնորհելով քաջառողջություն և ամենայն բարիք:

Օրհնությամբ

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ